ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 32.005.521

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվում է քաղաքական գիտության կարևոր հասկացություններից մեկը, ինչպիսին քաղաքական կանխատեսումն է: Անդրադարձ է կատարվում դրա պրակտիկ կիրարկմանը, առանձնահատկություններին, սկզբունքներին ու մեթոդներին, և հիմնավորվում դրա դերակատարությունը քաղաքական գործընթացների ժամանակ:

Առանցքային բառեր. քաղաքական կանխատեսում, քաղաքական վերլուծություն, քաղաքական գործընթաց, քաղաքական դիտարկում, մակրոքաղաքականություն, միկրոքաղաքականություն:

Պետական քաղաքականությունը ներկայացնում է նպատակաուղղված որոշումների կայացում սոցիալական, տնտեսական, պաշտպանական և հասարակական կյանքի այն բնագավառներում, որոնք միտված են իշխանության կողմից ընդունված առաջնահերթությունների կատարմանը:

Ամերիկացի տեսաբան Ջ. Անդերսոնը պետության քաղաքական կուրսի մշակումը բնութագրում է որպես «գործունեության հետևողական սխեմա», որը ենթադրում է «ծագող խնդիրների նկատմամբ ելակետային դիրքորոշումների որոշակիացում, քաղաքական ուղղության մշակում, հաստատում, ընդունում, գնահատում» [1]:

Պետական քաղաքականության իրականացման տեխնոլոգիայի ձևավորումը որոշակիանում է՝ պայմանավորված պետության կարգավորիչ գործիքների ընտրությամբ, ֆինանսական հնարավորություններով և այլ գործոններով: Սակայն որոշումների ընդունման ունիվերսալ տեխնոլոգիական օղակը, որը ընկած է պետական քաղաքականության ուղղության մշակման հիմքում, քաղաքական կանխատեսումը, պլանավորումը և ծրագրավորումն են:

Քաղաքական կանխատեսումը /հուն.՝ prognosis/ ներկայացնում է գիտական հետազոտություն, վերլուծություն քաղաքական կոնկրետ իրավիճակի վերաբերյալ: Քաղաքական կանխատեսումը վարկածների կառուցվածք է, որոնք արտացոլում են ապագայի քաղաքականությունը, բացահայտում այն գործոնների ամբողջությունը, որոնք տվյալ ժամանակահատվածում ազդում են պետական

կարգավորման օբյեկտի /առարկայի/ զարգացման վրա: Այլ կերպ ասած, կանխատեսումը ապագան կանխորոշող նախագծային և վարկածային /հիպոթեզային/ մեթոդիկայի այլ տեսակ է:

Մարդ արարածը մշտապես հակված է բարձրացնելու վարագույրը և տեղեկանալու իրադարձությունների ընթացքին: Կանխատեսման նկատմամբ հետաքրքրվածությունը պայմանավորված է բավականին հզոր կենսական մոտիվներով: Նույնիսկ անցման շրջանում գտնվող հասարակություններում, որտեղ շատ դեպքերում կարելի է բախվել անկայունությանը, հաճախ է օգտագործվում քաղաքական կանխատեսում հասկացությունը:

Սոցիալ-քաղաքական գործընթացների կառավարման պրակտիկան ցույց է տալիս, որ որքան բարձր է կանխատեսման մակարդակը, այնքան արդյունավետ է պլանավորման և կառավարման արդյունավետությունը: Քաղաքական ղեկավար մամինների համար ունենալ գիտականորեն հիմնավորված կանխատեսում նշանակում է տեսնել քաղաքական գործողությունների զարգացման ընթացքը:

Կանխատեսումը ներկայացնում է գործընթաց՝ միտված տեխնոլոգիական գործընթացների տվյալներին, դիտարկվող օբյեկտի իրավիճակի մշակմանը և ապագային: Կանխատեսումը, այլ խոսքով, ենթադրությունների վերամշակման գործընթաց է:

Յուրաքանչյուր կանխատեսում վերամշակվում է այնպես, որ բացառվեն իրադարձությունների զարգացման անցանկալի արդյունքները, և արագացվեն ցանկալի ուղղության հնարավոր զարգացումները: Կանխատեսումը՝ որպես նոր գիտաճյուղ, դրսևորվում է երկու ձևով.

1. Գիտելիքներ՝ խնդիրների առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք իրականում առկա են կանխատեսման դիտարկման կամ ոչ դիտարկման ժամանակահատվածում.

2. Գիտելիքներ այն երևույթների առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք կանխատեսման ժամանակահատվածում իրականում գոյություն չունեն [2]:

Հարկ է փաստել, որ կանխատեսումները կարևոր կապող օղակ են քաղաքական պրակտիկայի և հիմնախնդիրների մշակումների միջև:

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք ասել, որ կանխատեսումն ունի հստակության երկու հարթություն.

1. Կանխագուշակման հարթություն /օրինակ, երբ մենք ակադեմիական հետաքրքրասիրությունից ելնելով՝ կանխագուշակում ենք ինչ-որ հասարակության, քաղաքական ռեժիմի ապագան/:

2. Կանխավ ուղղորդված հարթություն, երբ գործ ունենք հստակ պլանավորված քաղաքական որոշման հետ: Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գոյություն ունեն քաղաքական շահ, մշակված քաղաքականություն և քաղաքական ռազմավարություն, իշխանությունը կրող անձի կամք, որին կանխատեսման պարագայում, կամա թե ակամա պետք է համաձայնեցնենք աշխատանքի մեթոդիկան և բովանդակությունը [3]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ **կանխագուշակման հարթությունը** ներկայացնում է ապագայում ցանկալի կամ հնարավոր քաղաքական իրավիճակների և գործընթացների նկարագրություն: **Կանխավ ուղղորդված** հարթությունը այս կամ այն խնդրի սեփական լուծման եղանակն է՝ օգտագործելով ապագայի վերաբերյալ գոյություն ունեցող ինֆորմացիան՝ նպատակային գործունեությանը միտված: Դրանով պայմանավորված՝ կարող ենք ասել, որ կանխատեսումը հանդիսանում է քաղաքական գիտության երկու երկու տարբեր բնագավառների՝ կիրառական քաղաքագիտության վերլուծության և քաղաքական մենեջմենտի միացություն:

Կարող ենք նշել, որ քաղաքական կանխատեսումը գիտականորեն հիմնավորված կարծիք է՝ ապագայում քաղաքական համակարգի և նրա առանձին տարրերի հնարավոր իրավիճակի, ինչպես նաև նվաճումների հնարավոր ուղիների և ժամանակի վերաբերյալ:

Քաղաքական կանխատեսումն ունի դրսևորման տարբեր ձևեր: Կախված մասշտաբներից՝ դրանք տարբերակվում են ըստ մակրոքաղաքական և միկրոքաղաքական դրսևորումների: **Մակրոքաղաքական կանխատեսումը** անհրաժեշտ է, երբ վերլուծում ենք բարդ կառուցվածք ունեցող քաղաքական օբյեկտներ, իրավիճակներ, երևույթներ, որոնք ներառում են մեծ թվով քաղաքական հանդիսատես, կամ ընդգրկում են քաղաքական մեծ ժամանակաշրջան: **Միկրոքաղաքական կանխատեսումը** այն դեպքում է արդիական, երբ վերլուծության է ենթարկվում կոնկրետ քաղաքական իրավիճակ /օրինակ՝ «Ծառուկյան դաշինքի» քվեարկությունը բյուջեի ընդունման ժամանակ/:

Ժամանակահատվածով պայմանավորված՝ կանխատեսումները լինում են օպերատիվ, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ: Օպերատիվ կանխատեսումը կայուն քաղաքական ռեժիմի պարագայում ունի կանխագուշակման 1 ամսվա ժամանակահատված /անկայուն իրավիճակում կանախագուշակման ժամանանակահատվածը նկատելիորեն փոքրանում է/: Կարճաժամկետ կանխատեսումն ընդգրկում է 1 ամսից 1 տարի, միջնաժամկետը՝ 1-ից 5 տարի, իսկ երկարաժամկետը 5-ից-15-20 տարի ժամանակահատված:

Երբ խոսքը վերաբերում է օպերատիվ կանխատեսմանը, ելնում ենք այն իրողությունից, որ քաղաքական իրավիճակը կամ իրադարձությունները պահպանում են իրենց կառուցվածքը կամ զարգացման միտումները, այսինքն՝ այն իրողությունից, որ տվյալ օբյեկտը կայուն է թե՛ քանակական և թե՛ որակական առումով:

Եթե կիրարկիչ կանխատեսումը պայմանավորված է քաղաքական իրավիճակի որակական ու քանակական կայունությամբ, ապա կարճաժամկետ կանխատեսումը թիրախավորում է որակական փոփոխությունների բնույթը և ընդունում միայն քանակական փոփոխությունները: Ինչ վերաբերում է միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներին, ապա այստեղ մեզ հետաքրքրում են տարբեր չափաքանակներով և՛ որակական և՛ քանակական փոփոխությունները: Միջնաժամկետ կանխատեսումներում քանակական փոփոխությունները գերակշռում են որակականի համեմատ, իսկ երկարաժամկետի պարագայում՝ ընդհակառակը:

Գործառնական նշանակությամբ պայմանավորված՝ կանխատեսումները լինում են երկու տեսակ՝ հետախուզական և նորմատիվային: Հետախուզական կանխատեսումը հենվում է պայմանավորված առաջարկներին, ապագային միտված այն իրավիճակներին, զարգացումներին, որոնք նախանշված են եղել տվյալ օբյեկտի, իրավիճակի վերլուծական փուլում: Հետախուզական կանխատեսման նպատակը օբյեկտի կամ քաղաքական իրավիճակի զարգացման խնդրի պարզաբանումն է գոյություն ունեցող զարգացման միտումների առկայության պայմաններում:

Նորմատիվային /չափակարգված/ կանխատեսումը, ի տարբերություն հետախուզականի, մշակվում է կանխավ որոշված նպատակի հիմքի վրա: Եթե հետախուզական կանխատեսման պարագայում բացառում ենք նպատակադրվածությունը, ապա նորմատիվային կանխատեսումը՝ որպես անհրաժեշտություն, ներառում է նպատակադրվածությունը՝ որպես նրա կենսագործունեության հիմք: Նորմատիվային կանխատեսման խնդիրը այս կամ այն քաղաքական իրավիճակի նոր որակի նվաճումը, ուղիների, ժամկետների որոշակիացումն է:

Ըստ օբյեկտի վրա կանխատեսումների ազդեցության չափորոշիչների՝ կանխատեսումները դրսևորվում են երկու ձևով՝ ինքնահիրացվող և ինքնահերքվող կանխատեսումներ: Հարկ է նշել, որ ինքնահիրացվող կանխատեսումը օբյեկտի վրա ունի այնպիսի ուժեղ ազդեցություն, որ նույնիսկ առանց ռեալ նախադրյալների առկայության՝ կարող է իրականանալ: Ի տարբերություն վերը նշվածի՝ ինքնահերքվողը /ինքնաբացառող/ գործնականում անիրականալի է, ինչում էլ հենց նրա նպատակն է: Այս պարագայում գլխավորը քաղաքական որևէ

իրավիճակում, դրանց իրականցման պարագայում, բացասական հետևանքների վեր հանելն ու մեկուսացնելն է:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել. կանխատեսումը բաժանվում է հետևյալ փուլերի.

• Նախականխատեսումային կողմնորոշում /սա ներկայացնում է կանխատեսման օբյեկտի որոշակիացման ժամանակահատվածը/:

• Հանձնարարական՝ կանխատեսման իրականացման համար:

• Կանխատեսման հետահայացություն /այստեղ ուսումնասիրվում են օբյեկտի զարգացման պատմությունը և նրա խորքային կանխատեսումը/:

• Կանխատեսումային ախտորոշում /այս փուլում տրվում է օբյեկտի համակողմանի նկարագրությունը՝ կանխատեսման մեթոդի ընտրությունը ճիշտ կատարելու համար/:

• Կանխատեսման պլանավորում, նախագծում /այս փուլում պետք է իրականացվի կանխատեսման վերամշակում՝ կատարված ախտորոշման հիմքի վրա/:

• Կանխատեսվող տվյալների ճշգրտության և ստույգության գնահատում:

• Կանխատեսման սրբագրում, կանոնակարգում /այս փուլում ճշգրտվում են կանխատեսման տվյալները՝ իրավիճակի զարգացման վերաբերյալ ստացված նոր տվյալների հիմքի վրա/:

Հարկ է նշել, որ քաղաքական իրավիճակի կանխատեսման արդյունավետությունը չպետք է գնահատել միայն դրանց ճշգրտությամբ ու հավաստիությամբ. պակաս կարևոր չէ իմանալ՝ որքանով է այս կամ այն կանխատեսումն ազդում հիմնավորման, օբյեկտիվության, նրա հիմքի վրա մշակված քաղաքական որոշումների արդյունավետության վրա:

Կարծում ենք, Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, կարիք ունի ստեղծելու քաղաքական կանխատեսման հզոր դպրոց, որի խնդիրը պետք է լինի.

▪ տարածաշրջանային, աշխարհաքաղաքական անընդհատ փոփոխվող իրավիճակներում կատարել հետազոտություններ, վերլուծություններ,

▪ դրանց հիմքի վրա քաղաքական կանխատեսումներ անել, ինչը կնպաստի բարդ իրավիճակներում ճշգրիտ կողմնորոշվելուն և արդյունավետ որոշումներ կայացնելուն,

▪ հաշվի առնելով ՀՀ-ի համար առաջնահերթություն հանդիսացող արցախյան հիմնահարցը՝ կատաել համապարփակ ու խոր վերլուծություններ՝ հաշվի առնելով տարածաշրջանային գործընթացները և սպառազինությունների մրցավազքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Anderson J.E.** Public Policymaking.-Boston, Houghton Mifflin, 1990.-35 p.
2. **Lipset S. M.** The Social Reguisites of Democracy Revisited //American Sociological Review.-2012.-Vol. 59.- P.14.
3. **Кретовю Б.И.** Прикладная политология. -М., 2009. -135 с.

Н.К. БАГДАСАРЯН

СУЩНОСТЬ И НЕОБХОДИМОСТЬ ПОЛИТИЧЕСКОГО ПРЕДСКАЗАНИЯ

Обсуждается такая важная концепция политической науки, как политическое предсказание. Основное внимание уделяется практическому применению, особенностям, принципам, а также методам его практической реализации и его неоценимой роли в политических процессах.

Ключевые слова: политическое предсказание, политический анализ, политический процесс, макрополитика, микрополитика.

N.K. BAGHDASARYAN

THE ESSENCE AND NECESSITY OF POLITICAL PREDICTION

One of the most important problems of political science is political prediction. The practical realization characteristic features, methods and principles are discussed and their invaluable role in political processes is substantiated.

Keywords: political prediction, political analysis, political process, political viewing, macro politics, micro politics.